

կազմեց: — Այս է մեր խնդրոյն ներթ եղող քաղաքը, ուստի Մեքալուպոլիս-Մեքաստիա, ո՛չ Կապիրա-Մեքաստէ-Նէպիտարիա, առաջինն՝ արդէ «Սիվազ», վերջինն՝ արդէ «Նիկասար»:

Քանի մը խօսք ալ Մեքաստուպոլսոյ մասին: Այլեւայլ անորոշ ու չիտթ խօսքերէն ետքը (համառ. նաեւ «Ձէյլեան Մեքալուպոլիս», էջ 525) կը գրուի՝ «Նոյնպէս Մեքաստուպոլիս մէկէ աւելի էր... երրորդը մեր խնդրածն է, նոյնպէս Փոքր Ասիոյ մէջ Կապապոլիս, կամ ինչպէս Պտղոմէոս կ'ուզէ (Ե. դ) Պոնտոս Կապապոլիսոյ մէջ, եւ Պլինիոս (Չ. դ) Կապապոլիսոյ Կոլորենէ գաւառին մէջ: Անտոնիոսի ճանապարհացոյց մատենը կը նշանակէ այն ճանապարհին վրայ՝ որ Տաւրայէն կ'երթայ Մեքաստիա քաղաքը, Գարանիա եւ վերին աւանաց մէջ» եւն (— այս դժի մասին տես Անդերսըն, «Պոնտ. Ուսումն», Ա., § 12—13): Կը վերջացնէ թէ Մեքաստուպոլիսը «կը յարմարընեն ոմանք Թուրքալի հետ... այլք Սուլուսէրայի հետ որ աւելի յարմար կը թուի» (էջ 526): Ճիշդն է վերջինս, Թուրքալի ըլլալով հին Իբորա: Պլինիոսի խօսքը պէտք չկայ խիստ մտօք անուշ, որով Մեքաստուպոլիս ալ Կողոպենէի մէջ գնել. խօսքին իմաստն է աւելի թէ ի Կողոպենէ Մեքաստիոյ հետ նաեւ Մեքաստուպոլիս միաժամանակ հիմնուեցան Աւգոստոսէ եւ «Մեքաստէ» անունն առին (տես «Պոնտ. Ուսումն», Ա., § 16. Բ., § 14): Մեքաստուպոլիս՝ նաեւ Հեքալիգոպոլիս, վերահիմարկութիւն մըն էր հին Կարանա գիւղին որ յառաջ ենթարկեալ էր Ձելայի, եւ յետոյ այն մանրապետութեան մէջ էր՝ զոր Հռոմայեցի կայսերք շնորհած էին գաղատական չորրորդապետական տոհմէ Ատեպորիքս իշխանին, որուն մահուանէն ետքը (3/2 Ն. Ք.) այս իշխանութիւնը կցուեցաւ՝ իբր հռոմէական գաւառ՝ Գաղատական Պոնտոսի: Մինչդեռ Պոզեմոնականն՝ իւր Կողոպենէով՝ իբր մանրապետութիւն մնաց տակաւին կէս դարէ աւելի (մինչեւ 63 Յ. Ք.): Գաղատական Պոնտոսի կը վերաբերի նաեւ Կոմանա Պոնտացոյցոյ՝ հին մեհենատեղին, մեհենիւ, պաշտամարք եւն նման Գամրաց Կոմանայի, որոնց երկուքին պաշտամանց նմանութիւնը Հայոց պաշտամանց հետ կը շեշտէ Սարգոն, թէպէտ եւ աւելի Ձելայի մեհենանը նուիրուած էր, կ'ըսէ, Անահայ, «այն է տիկնոջ՝ զոր

պաշտեն եւ Հայք». բայց Կոմանա էր նաեւ «երեւելի վաճառաչահ քաղաք եւ մին ի գլխաւոր վաճառացն եկելոց ի Հայոց» եւն (Սարգոն, ԺԲ., 3, 32—37): Հոս ալ էր նոյն քրմապետութիւնն («երկրորդ յետ թագաւորին») եւ նոյն մեհենատեղաց զրուութիւնը: Մեհենական կալուածքին՝ «նուիրական երկրի» (Սարգոն) մաս էր Դագիւմնիտիս (արդէ՛ Կաղ-Օվա, Դագիւմնի՛ Եւզոկիա, արդէ՛ Թուրաթ), նաեւ Հռոմէացոց ժամանակ քրմա-իշխանի ներքեւ էր, եւ վերջին քրմիշխանի՝ Դիւտեւոսի՝ մահուանէ ետքը (34/35 Յ. Ք.) հռոմէական գաւառ եղաւ եւ Գաղատականին անցաւ: Կ'երեւայ թէ, կ'ըսէ Կիւմոն (անդ, Բ., § 14) Տրայիանոս՝ որ Գաղատական Պոնտոսը կցեց վերախաղմեալ Կապապոլիսի նահանգին, առանձնապէս կարեւորութիւն տուած է Մեքաստուպոլսոյ՝ ընելով զայն հռոմէացոսն կենդրոն մը տակաւին կէս-բարբարիկ երկրին, եւ այս ատենէ կը սկսի քաղաքին դրամահատութիւնը: Յամենայն դէպս մեծ ծաղկում ունեցած է, եւ վկայ են հոս գտնուած արձանագրութիւնքն, որոնց մին (Թ. 290) կարեւորագոյնն է՝ տալով պայծառ գաղափար այս կողմանց քաղաքաշխական եւն կազմակերպութեանց: Չասոնք յիշեցինք անոր համար որ Մեքաստուպոլսոյ շրջանը յետոյ մտաւ արդէն Թէոդոսեան «Ա», իսկ Կոմանայի շրջանը աւելի ուշ՝ Յուստինիանու «Բ» Հայոց մէջ, մայրաքաղաք ունենալով Մեքաստիան: Մանր բանակաթեմերու շրջանին Դագիւմոն կարեւոր դերք մ'ունէր Արմէնիականի մէջ: Իսկ Կոմանա ի սկզբանէ ի վեր կարեւոր հանգրուան մըն էր՝ պետութեան կարեւոր մէկ ուղեգծին: — Կը թողունք միւս ամէն կէտերը:

(Շարունակելի):



Գ Ի Ո Ն Ե Ս Ի Ո Ս Բ Ե Ր Ս Ե Լ Ի Բ Ի Ի Հ Ա Կ Ե Ժ Ե Թ Ի Թ Ի Ի Ն Ը Հ Ա Յ Ո Յ Գ Է Մ

(Շարունակութիւն եւ վերջ):

ԳԼՈՒԽ Ը.

Հայոց սովորութեանց դէմ:

Հայերը դարձեալ կը հարցնեն մեզի թէ ի՞նչու մեզի պէս խոստովանանք¹ չէք ըլլար: Անոնց կը պատասխանենք. մենք ալ մեր մեղքերու խոստովանութիւն կ'ընենք, բայց ինչպէս որ պատշաճ է, եւ ոչ ձեզի պէս պարզեւնեբու փոխան²: Խոստովանութիւնն առաջին անգամ Յովհաննէս Մկրտիչ քարոզեց. ուստի մեզի պէս որ փարիսեցիները անոր կ'երզուած է որ Փարիսեցիները անոր կ'երթային իրենց մեղքերը խոստովանելով: Մեթային իրենց մեղքերը խոստովանելու վաւերը, որ կը զղջայ ու կը խոստովանի իւր մեղքերը, գովելի է. բայց երբ յետոյ կը դառնայ իւր մեղքին, կ'իյնայ ու կ'ըլլէ՝ կը շինէ ու կը քանդէ շարունակ, եւ կը նմանի շինէ ու կը քանդէ շարունակ կը վերադառնաներու որ իրենց փոխածին կը թաւանան եւ խոզերու, որոնք դարձեալ կը թաւանան եւ խոզերու, որոնք դարձեալ կը թաւանան ին տիղմին մէջ³: Խոստովանանքը պէտք է ըլլայ ճշմարիտ, ինչպէս որ Դաւիթ կատարեց, որ մեղքերը խոստովանելէ ետք՝ կրկին ընդհատեց. այդպէս ըրին նաեւ Մանասէ, մեղքերը կ'ընէր, ու Սիմէոն՝ առաքեալներու զուլը, մաքսաւորները, կ'ընէրն ու աւազակը. վասն զի Գիւրբը կ'ըսէ. Մի վստահի մեղքի թողութեան վրայ եւ մեղք մեղքի վրայ մի զիցեր⁴: Ուստի կ'ըսենք թէ լաւ է խոստովանանքը, վասն զի «եթէ մեր մեղքերը տովանանքը, վասն զի «եթէ մեր մեղքերը խոստովանինք՝ հաւատարիմ՝ ու արդար է խոստովանինք» հաւատարիմ ու արդար է խոստովանինք⁵: Եւ «ըսի թէ պիտի Աստուած մեզի թողու»⁶: Եւ «ըսի թէ պիտի Աստուած մեզի թողու»⁷: Այն որ կը խոստովանի իւր մեղքերը եւ կը խուսափէ անոնցմէ՝ Աստուած կը

1 Կը գործածէ հայերէն «խոստովանութիւն» բառը: Տես այս կէտին շուրջ Յովհ. Ժ. Բար-Շուշանի Հայոց Կաթողիկոսին գրած թուղթը. վիճակ 1923, էջ 58—59, 85—89: Բարսալիբի տեսած է Բար-Շուշանի գրուած թիւնը, ուստի հոս եւս գաղափարի եւ նախադասութիւններու փոխառութիւններ զգալի են:
2 Բնագիրն ունի (ԱՅՕՁՁ ՁՁՁ), որ կը նշանակէ «պարզեւնեբու համար» ինչպէս կը հասկնայ Mingana, for a consideration, p. 43. Բայց նաեւ «կատարած ըլլալու համար» կրնայ նշանակել: Բարսալիբի կը գործածէ (ԱՅՕՁՁ ՁՁ) իմաստով:
3 Բ. Պետր. Բ., 22:
4 Սիբաթ Գ., 29:
5 Ա. Յովհ. Ա., 9:
6 Սաղմ. ԼԱ., 5:
7 Յակ. Ե., 16:

զթայ անոր: Բայց (խոստովանանքը) պէտք է իմաստուն բժշկի եւ փորձառու մարդու առջեւ ըլլայ, որոնք կրնան օգնել: Եթէ սակայն մարդ իւր ցաւերը բժշկին չի յայտնէր՝ կը մնայ անբուժելի: Այն որ բոլոր սրտէ կը ցանկայ բուժուիլ, պէտք է հոգեւոր բժշկին հնազանդի, որպէս զի չուտով բժշկութիւն գտնէ. եթէ սովորութեանէ եւ ոչ եռանդէ մղուած մերձենայ մեղաց խոստովանութեան՝ կը մնայ անբուժելի: Եւ սակայն Հայոց խոստովանանքը սովորութեանէ է եւ ոչ եռանդով, անկից (կը տեսնուի) որ անոնք ստէպ կը խոստովանին եւ անմիջապէս կ'երթան կ'իյնան առաջինէն աւելի դէժ մեղքի մէջ:

Դարձեալ կը հարցնեն թէ երբ պատարակել կ'ուզէք՝ ի՞նչու եկեղեցոյ մէջ ձեռք կը լուար:

Անոնց կը պատասխանենք, թէ այդ եւս խորհրդանշական է. ասոր մասին մար Դիոնիսիոս Բ. ճառին մէջ գրած է, որ քահանան խորհուրդը կատարելէ առաջ մատերուն ծայրը լուարով կը ցուցնէ թէ զեռ ազատ չէ մեղքի անմաքրութենէն. ահա մեծ դոհէն առաջ կը լուայ իւր բոլոր աղտերը, որպէս զի սրբութեամբ քահանայանայ փառաց Տիրոջ առջեւ⁸: Նաեւ խորհուրդը կատարելէ ետք կը լուայ. երբ քահանայական զգեստները կը հանէ՝ կը լուայ ձեռքերը, որպէս զի անվայել բանի չդպչի: Եւ ո՞րն է գովելի մեհնք որ եկեղեցոյ մէջ մեր ձեռքերը կը լուանք, թէ դուք որ կերակրոյ եւ պնակին մէջ, ուսկից կ'ուտէք, ձեռք կը լուար:

Գանք հիմայ անոնց ուրիշ մէկ բարբանջանքին: Կ'ըսեն. Ի՞նչու հին ժամանակ Ծննդեան եւ Յայտնութեան տօները նոյն օրը կը կատարէին, եւ դուք կը բաժնէք:

Կը պատասխանենք անոնց. Պահքն ալ առաքեալներու ժամանակ Յայտնութեան տօնէն ետք կը պահուէր, բայց 318երու ժողովին մէջ Չարչարանաց շարթուն հետ կարգեցին. ուստի թողուցէք նոր սովորութիւնը եւ բռնեցէք հինը, դուք որ հիները կը սիրէք: Սակայն առաքեալներու ժամանակ Ծաղկազարդն ու Չարչարանաց շարթը երեսուն տարի մէջ մը կը կատարուէր, ուստի դուք ալ երեսուն տարի անգամ մը տօնեցէք Ծաղկազարդն ու Չարչարանաց շարթը: Բայց առաքեալը կ'ըսէ. Ամէն բան քննեցէք, եւ ինչ որ լաւ է՝ բռնեցէք⁹: Ուստի պատշաճ է նախ

8 Patr. Gr., III, 1, 440, 465.
9 Ա. Թէս. Ե., 21:

Ծնունդը տօնել յետոյ Մկրտութիւնը, վասն զի Ծննդեան եւ Յայտնութեան միջեւ երեսուն տարի կայ: Ամէն բան որ մթին է կամ բնութեամբ կամ սովորութեամբ կամ Գրքով հաւատեալ կը ստուգուի. բնութեամբ (կը ստուգուի) օրինակ յղացումը, ծնունդն ու ածումը. սովորութեամբ՝ ինչպէս հիւսնութեան կամ ատաղձադորձութեան արուեստը, եւ սուրբ Գրքէն՝ ինչպէս «Իրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի»: Բնութեան ու Գրքին կապուած է զպայարանքի գիտութիւնը, իսկ Գրքոյ խօսքին կը պահանջուի հաւատք: Եւ ժողովուրդներու սովորութիւնն է, որ նախ ծնունդ կը տօնեն յետոյ մկրտութիւն, եւ բնութենէն գիտենք թէ մարդ նախ կը ծնանի յետոյ կը մկրտուի: Եւ սուրբ Գրքէն (կ'իմանանք) թէ Քրիստոս ծնաւ 25 Դեկտեմբերին: Կը զբէ Դուկաս թէ վեցերորդ ամսոյն զրկուեցաւ Գարբիէլ: Վեցերորդ ամիս կը հաշուէ Յովհաննու յուլիանէն. այնպէս որ Յովհաննէս վեց ամիս է արգանդն էր: Հոկտեմբեր 11ին արեգակնային ու լուսնային երկու հաշիւները կը հաւասարին. երբ հաշուենք Հոկտեմբեր 11ին լուսնն ունի 10 օր. եւ Մարտ 25էն մինչեւ Դեկտեմբեր 25, մեր Փրկչին ծնունդը՝ կը գտնենք 9 ամիս. լուսնոյ 10ին ուրեմն յուլիանը, եւ 6ին ծնունդը, ինչպէս կ'ըսէ մար Եփրեմ «Տասին յուլիանը եւ վեցին ծնունդը¹⁰»: Մարտ 25ին երբ Օրհնեալին աւետում եղաւ՝ լուսնոյ տասն էր, եւ Դեկտեմբեր 25ին երբ ծնաւ՝ լուսնոյ վեցն էր, ինչպէս կ'ըսէ մար Եփրեմ:

Մինչեւ Արկաղիոս թագաւորի եւ մար Յովհաննէսի ժամանակը՝ Պաղեստին ու հիւսիսային կողմերը միտակց կը բռնէին երկու տօները, արեւմուտքի մէջ սակայն առանձին կը կատարէին ինչպէս մեր օրերուն: Երբ այս գեղեցիկ ու գովելի սովորութիւնը արեւելք եկաւ՝ բոլոր ժողովուրդներն ընդունեցան զայն, հետեւաբար շատերը առանձին տօներին այդ տօները: Նաեւ Աստուածաբանը կը վկայէ, որ իւրաքանչիւր տօնին վրայ ուրոյն մեկնութիւն գրած է. Յայտնութեան ճառին մէջ այսպէս կ'ըսէ. «Ծնունդը ասկից ատաջ տօներնք ինչպէս պատշաճ էր¹¹»: Դարձեալ ծնունդը սկիզբն է բոլոր տնօրինական գործերուն. եւ աւետարանիչը ծնունդէն կը սկսի գրութիւնը, յետոյ կը պատմէ անոր մկրտութիւնը: Դուք Ի՞նչու կը խոսվիք ու կ'ըսէք թէ նոյն օրը կ'իջնան ծննդեան

¹⁰ Հմմտ. Եփրեմ, Համարարան, Բ. Հտր., 19: ¹¹ Patr. Gr., XXXVI, II, 314.

ու մկրտութեան տօները¹²: Եթէ հազար տարի ալ անցնի՝ 25 Դեկտեմբեր պիտի չըլլայ Յունուար 6:

Դարձեալ կը հարցնեն մեզի թէ Ի՞նչու եկեղեցւոյ մէջ կնդրուի չէք ծխեր. եւ թէ մոպերը Քրիստոսի կնդրուի նուիրեցին:

Անոնց կը պատասխանենք թէ մոպերը իրենց հետեւած հեթանոսական սովորութեան համաձայն՝ կնդրուի եւ զմուսս կը բերեն, վասն զի հեթանոսները մինչեւ հիմայ կնդրուի կը զոհեն իրենց աստուածներուն: Իսկ Հայերը սահմանեցին խառն խունկ ծխել. բաղադրուած խունկը կը խորհրդանշէ Քրիստոսը, որ աստուածութենէ ու մարդկութենէ բաղադրուած է: Արդ կ'ուզէ՞ք մոպերու նման կնդրուի ծխել, զմուսս եւ ոսկի փառնեցէք կնդրուիին եւ այնպէս ծխեցէք: Բայց տեսէ՞ք՝ Եսայի հրեաներուն հետ կը պարտաւէ զձեզ. ան կ'ըսէ. «Այն որ կնդրուի կը զոհէ՝ իբր թէ կուտեր պաշտէր¹³»: Իսկ սուրբ Կիրեղ Երրայեցւոյ թղթոյն մեկնութեան Բ. մասի Ա. ճառին մէջ (կը զբէ). «Ունիմք քահանայապետ մեծ... տեսէք մեր Փրկչին քահանայութեան կերպը. չենք գտներ զինքը երինջ կամ կնդրուի զոհելով, անոնց պէս՝ սրոնք մովսիսական օրէնքի համաձայն քահանայութիւն կ'ընէին»:

Դարձեալ մեզի կը հարցնեն Թորգոմայ որդիները. Ի՞նչու մէկ մատով խաչ կը հանէք:

Անոնց կը պատասխանենք. Պատի կամ հողի վրայ խաչ մը զծեցէք. եթէ մէկ մատով զծէք՝ մեզի պէս կ'ընէք. իսկ եթէ երկու կամ հինգ մատով (զծէք), այն ատեն (կը նմանիք ձեռքով) ոսպ կամ կամուրջի ցից ձեռողին: Եթէ ըսէք թէ երեք մատերը Երրորդութիւն կը նշանակեն, խորհեցէք որ Երրորդութիւնը չէ խաչուած: Ոճիրներով լի, հաւատքին մէջ անուղղայ մարդուն Ի՞նչ օգուտ կայ՝ խաչը երկու, երեք կամ մէկ մատով հանելէ: Մտածումներու մաքրութիւն կը պահանջէ մեզմէ Աստուած:

Լսեցէք մար Յովհաննէսին թէ Ի՞նչ կը վկայէ Մատթէի Մեկնութեան ԾԳ. ճառին մէջ. «Գնով փրկուեցաք. զին տրուեցաւ ձեր փոխան. ոչ մէկու ճառայ եղէք. զինով՝ խաչը կը մատնանշէ (Պօղոս). հարկ է մատով պարզապէս խաչ չհանել¹⁴»: Տեսէք չըսաւ յոգնակի՝ մատերով, այլ մատով:

¹² Հմմտ. Բար-Շուշան, էջ 62—69: ¹³ Ես. 42, 3: ¹⁴ Patr. Gr., LXVIII, 537.

Մովսէս գաւաղանով երկու, երեք անգամ չչարկաւ ծովուն մէջ՝ երկայնութեան ու լայնութեան. այլ մէկ անգամ երկայնութեան, մէկ անգամ լայնութեան, նշանակելով խաչի խորհուրդը թէ մէկ մատով պէտք է հանենք: Այս նիւթին մասին ընդարձակ գրած ենք Կաղկեդոնականներու դէմ մէկ հակաձառութեան, նաեւ Սոստովանութեան գրքին կցուած ուրոյն գրութեան մէջ:

Իսկ դուք Պահոց մէջ ձէթ կ'ուտէք (կ'ըսեն Հայերը)¹⁵:

Անոնց կը պատասխանենք թէ ձեր աշխարհականները Պահոց մէջ զինի կը խմեն: Բայց կը բաղձանք ծանօթացնել ձեր այլաբանութեամբ պահքը: Ընկողի կերակուր կամ ձէթ¹⁶, չամիչ ու քացախ չէք ուտեր. եւ շուշմայ ու մահճուր¹⁷ կ'ուտէք: Ձէթի ծնողը կ'ուտէք, իսկ ծնունդը կը մերժէք: Ամէն մէկը ստոյգ գիտէ թէ շուշման իւր է ինչպէս ձէթը. բարկ քացախ կը թողուք, եւ կնճիթ եւ ունդ կ'ուտէք: Չամիչ չէք ուտեր եւ թուլ ու պտուղ կը լափէք: Միջուկները կը քամէք եւ ուղտերը կը կլլէք: Դուք որ հիններուն կը նմանիք, պահոց մէջ միս կերէք նաև զովրեցիներու պէս, որոնք չամիչ ու կոխած խաղող կ'ուտէին¹⁸:

Դարձեալ Հայոց (սուրբ) Գրքին մէջ ամէն անգամ որ ձէթ բառը յիշատակուի «ճարպ» կ'ըսուի փոխանակ ձէթի: Այդ եղաւ թարգմանիչներու անձեռնհասութեան պատճառաւ: Երբ մկրտած միջոցին՝ «այս ոք իւզով կ'օծուի» ուզեն ըսել, «ճարպով» կ'ըսեն. այդ հակասակ է Գրքին: Ձէթը ծառէ ու բոյսէ է, իսկ ճարպը՝ արջառէ կամ կովէ¹⁹: Այս բաւ է իրենց:

¹⁵ Այսպէս բառացի ընդգրկն մէջ. փակագծեալն աւելցուցինք: Mingana կը ըսէ նախադասութիւնը՝ also about their (ձան. lit. your) eating oil in Lent, p. 48. որով Հայերն ամբաստանուած կ'ըլլան թէ Պահոց մէջ ձէթ կ'ուտեն. մինչդեռ հակառակէն Հայերն Ասորիներու կ'ուզեն այդ ամբաստանութիւնը: Այդ կը ցայտէ նաեւ յաջորդ տողերէն: Թէ ձէթն արդէն զայն էր Պահոց մէջ՝ ծանօթ է նաեւ Մայ ժողովէն: ¹⁶ Mingana, p. 48. այս նախադասութիւնը կը թարգմանէ այսպէս. you do not eat in a utensil where there was food cooked with oil of walnut, but you eat olive oil. Բնաղբը չունի but you eat, որ հակառակ է Բարապիլիի դիտածին: ¹⁷ Մինչդեռ զանց կ'անէ: ¹⁸ Մինչդեռ զանց կ'անէ: ¹⁹ Լուսնայագրութիւն մը կը կրկնէ վերջին հատուածը փոքրիկ տարբերակով: այսպէս. «վասն զի Հայոց (Ս.) Գրքին մէջ ամէն անգամ որ ճարպ բառը յիշատակուի՝ ձէթ կ'ըսուի, փոխանակութեան պատճառաւ. թարգմանիչներու անձեռնհասութեան պատճառաւ: Երբ մկրտած միջոցին «այս ոք իւզով կ'օծուի» ուզեն ըսել, «ճարպով» կ'ըսեն. այդ հակասակ է ուզեն ըսել, «ճարպով» կ'ըսեն. այդ ճարպը՝ ար-Ս. Գրքին: Ձէթը ծառէ ու բոյսէ է. իսկ ճարպը՝ ար-

ԳԼՈՒԽ Թ.
Հայոց դէմ:

Բայց դարձեալ կը բամբասեն ու կ'ըսեն թէ Ի՞նչու եկեղեցւոյ մէջ նուիրարեւութեան ժամանակ ամէնուն առջեւ դռները կը բանաք, որպէս զի ներս մտնեն:

Անոնց կը պատասխանենք. Առաքեալներու ժամանակ հինգ դասակարգ կար, որոնք կամաց կամաց անհետացան եկեղեցիէն, ինչպէս որ զրեցիք Տարերք եւ իմացական ու զգայական բնութիւնք գրքին մէջ: Հիմայ արդարներն ու մեղաւորները, բարիներն ու չարերը խառն են: Եթէ արդիւնք անոնց կենդանի խօսքերը լսել՝ ամբողջապէս պիտի կորսուին: Սօսքերը լսելով զղջման կու դան եւ հետզհետէ ապաշխարութեան կը մերձենան եւ խորհուրդներն ընդունելու արժանի կ'ըլլան: Իսկ դուք կը նմանիք այն մարդուն, որ ընկերը տիղմին մէջ ինկած տեսնելով փոխանակ երթալու հանելու՝ մինչեւ վիզը ներս կը մղէ զայն:

Տեսնենք դարձեալ անոնց տգիտութիւնը եւ թէ որչափ անմիտ են. աստուածային միւսոնը որով հրամայեցին մեզ զորոշմել բանաւորները մկրտութեան ժամանակ՝ վէրքի իբր դեղ կու տան. ուտելէ խմելէ ետք կը կիրարկեն զայն: Եւ Յայտնութեան տօնին՝ կը թափեն զայն գետին մէջ եւ ձին ու էջը կը շարեն հոն, որպէս զի իրենց վէրքերէն բուժուին: Մարդիկներու տրուած միւսոնը՝ անբան անասուններու կը գործածեն անմիտները:

Հայերը եկեղեցիները կ'օծեն ինչպէս ամէն մարդ՝ վասն զի ուխտի տապանակը կը խորհրդանշէ. եւ ինչպէս որ մէկ է հաւատքը եւ մէկ՝ մկրտութիւն, նոյնպէս եւ մէկ անգամ է եկեղեցւոյ օծումը. սակայն ասոնք կ'ըսեն թէ երբ չուն կամ կղաքիս ներս մտնէ՝ միւսոնը կ'երթայ ու կը պղծուի, եւ այդպէս կրկին կ'օծեն, առանց զիտնալու թէ օծումը չէ գացած եւ անոր մէջ աղօթքով կը վերանորոգուի հողեպէս:

Ապօրինի բան մըն ալ կը կատարեն. ուտելէ ետք կը մկրտեն: Ի՞նչպէս չեն ամենար գինով վիճակի մէջ մկրտութեան ջուր նուիրարործելէ: Ինչպէս որ առանց ծոմի՝ պատարազ չի կատարուիր, նոյնպէս նաեւ առանց ծոմի՝ մկրտութիւն չի կատարուիր:

Չառէ կամ կովէ»: Գրիչ մը արարեքէն կը յաւելու. «այս աւելորդ է»: ¹ Mingana, p. 49, դուրս կը թողու:

Բարսեղ նոյն ճառին նոյն գլխուն մէջ կ'ուսուցանէ զմեզ. «Նաեւ ամբողջ Պենտեկոստէն յիշատակ է հանդերձեալ աշխարհի յուսացուած յարութեան, վասն զի եթէ 1 օրը 7 անգամ 7 բազմապատկենք՝ Պենտեկոստէի 7 շաբաթները կ'ունենանք: Առաջինով կը սկսի եւ նոյնով կը վերջանայ, որով շրջանակի կը նմանի, յիսուն անգամ շրջելով. ուստի եւ յաւիտենականութիւնը կը պատկերացնէ շրջանակաձև ընթացքով՝ սկսելով ու վերջանալով միեւնոյն դժով: Այդպէս կանգուն գլխով աղօթել կ'ուսուցանեն մեզ եկեղեցւոյ օրէնքները, ինչպէս ըսուեցաւ իբր տեսանելի յիշատակ մը՝ փոխադրելով զմեզ ներկաներէն հանդերձեալներուն»¹⁵:

Իսկ Հայերը կը հարցնեն մեզի թէ Դուք Ասորիները ազգովին ո՞րմէ ծագած էք:

Անոնց կը պատասխանենք. Դուք ալ չէք գիտեր թէ ո՞ւր եղև կը սերիք, վասն զի Արմէն անունը՝ Արմէն երկրի եւ Արմէնիա անունէն է. եւ մենք ձեր վարդապետներուն ստրկացոյցինք ձեր հասարակաց հայրը եւ յայտնեցինք թէ Թորգոմէն կը սերիք, ինքն ալ Յարեթի որդիներէն: Իսկ մեր աղբը կը սերի Սեմէն եւ մեր Ասորիներու հայրն է Կամուէլ, Արամի որդին¹⁶, եւ այս Արամի անունէն երբեմն նաեւ սուրբ Գրքի մէջ Արամայեցիք կը կոչուինք, իսկ Սիւրիացի կը կոչուինք Սուրոս անունէն, որ Անտիոք իւր շրջականերով շինեց, եւ անոր անունով Սիւրիա կոչուեցաւ:

Այս եւս ծանուցանենք ուսումնասէրներուն. 440 տարի առաջ Հայերը Սիւրիոյ երկիրը մտան, մեր հօրը, մեր վանքերը եւ զիւզերը բռնեցին. երբ մեր պատրիարքն էր մար Աթանաս, որ Յունաց 1037 թուականին՝ Հայոց եւ անոնց Յովհաննէս կաթողիկոսին հետ ներքին Մանազկերտի մէջ միութիւնը բաւ: Այն ժամանակ ասոնց թաղաւորութիւնը բարձուած էր եւ Պարսիկները կ'ընդունէին հոն: Հայերը սկսան կամաց կամաց Հայաստանէն Սիւրիա իջնալ, եւ երբ Աթանասիոս պատրիարքը տեսաւ թէ Սիւրիա իջնողները՝ չունենալով քահանայ կամ եպիսկոպոս, քաղկեդոնականներու կամ Յուրանու աղանդաւորներուն հետ կը միանային՝ Յովհաննէս կաթողիկոսին տեղեկացուց, եւ Յովհաննէս երկու եպիսկոպոս զրկեց, որոնք

Սիւրիա իջնող բոլոր Հայերն ընդունեցան, եւ մեր պատրիարքը Յովհաննէս՝ սահմանի վրայ վանք տուաւ, հոն ասորի եւ հայ մանուկներ դրաւ, որոնք երկու գրականութիւնն ալ ստրկեցան եւ վարդապետներու դործերը ասորերէնէ հայերէնի թարգմանեցին: Մեր պատրիարքին եւ անոնց Յովհաննէս (կաթողիկոսին) վախճանելէն ետք՝ անարդեցին պայմանները եւ յարձակեցան մեր ժողովուրդին վրայ: Եւ ոչ իսկ Հայաստանի հայերու լեզուն կը նմանի հասակացիներուն. ասոնց լեզուն կը նմանի ասորերէնի եւ մօտ է մեր բարբառին: Եւ յետոյ կամաց կամաց գրականցին մեր եկեղեցիները եւ Սեւ լեռան վանքերը, եւ մեր օղնութեան փոխարէն եղան մեր հակառակորդները:

Ունին դարձեալ բնութեան եւ սուրբ Գրքի հակառակ սովորութիւն մը. Քրիստոնեաները անօրինական տօները ինչպէս նաեւ սուրբերու տօները այն օրը կը բռնեն, որ օրը մեր Տէրը (անօրինական գործերը) կատարեց կամ սուրբերը նահատակուեցան ու վկայեցին: Ասոնք սակայն այնպէս չեն ընկր. բոլոր տօները իրենց պատշաճ օրերէն կը փոխադրեն եւ կիրակի կը կատարեն, բաց ի կը կատարեն: Եւ սակայն երբ մեծ Աստուածարանը օր մը վրիպեցաւ Կիպրիանոսի տօնէն՝ այդ մեծ փառս ու կորուստ համարեցաւ, ուստի այսպէս կը գրէ. «Կիպրիանոս զրեթէ փախաւ մեզմէ. ո՞հ, ի՞նչ կորուստ. եւ դուք կրեցիք զայն¹⁷»: Նկատեցէք թէ ի՞նչպէս ցաւեցաւ սուրբ Գրիգոր օր մը անցնելուն համար՝ մինչ ինք կը բացակայէր սուրբին տօնը տօնելու: Իսկ դուք չորս օր կը թողուք տօնի օրուն եւ յիշատակի միջեւ, զոր առաւել կամ նուազ կը կատարէք:

Ուրիշ վատ սովորութիւն մըն ալ ունին. անոնց քահանան եպիսկոպոսը կ'օրհնէ, եւ եպիսկոպոսը՝ կաթողիկոսը եւ իրենցմէ մին կ'ընէ զայն, եւ յետոյ դարձեալ իրմէ կ'օրհնուի: Եւ չեն հասկնար Պօղոսի խօսքը թէ «Կասկած չկայ՝ այն որ նուաստ է՝ կ'օրհնուի առաւելագոյնէ¹⁸»: Արդ ըսէք մեզի. ո՞վ է մեծ՝ եպիսկոպոսը թէ քահանան: Եթէ եպիսկոպոսը մեծ է, ուրեմն քահանան պիտի

¹⁷ Patr. Gr., XXXV, I, 1169.
¹⁸ Երբ. Է., 7: Այս հարցին համար համա. Բար-ժուշան, էջ 75-77. Lichti եւ Ն. Ա. Վարդանեան գործիս այս մասը իզնատիոս Անտիոքացւոյ կը համարեն, զոր Lichti կը նոյնացնէ իզնատիոս Ղազարոսի հետ (Բար-Շուշան, էջ 14-17): Ասեմանի համար՝ իզնատիոս Ղազար մեռած է 1163ին ըստ մեր թուականին, ուրեմն ժամանակակից էր Բարսաւրբի:

¹⁵ Անդ:
¹⁶ Կամուէլ Արամի հայրն էր. հայերէն թարգմանութիւնը յատկանշական չեղում մ'ունի Արամը հասկնալով իբր Արամայեցիք, ուստի կը գրէ. Ծնաւ գիւմուէլ հայր Ասարաց, Ծնող. Իբ., 21:

օրհնուի եպիսկոպոսն, եւ ոչ եպիսկոպոսը քահանայէն: Եթէ ըսեն թէ հաւասար են կարգով ու աստիճանով, այն ատեն քահանան ի՞նչու սարկաւազ կամ իր նման քահանայ չի ձեռնադրեր: Բայց Առաքելոց կանոններուն մէջ գրուած է, որ քահանան օրհնէ զանոնք որ իրմէ վար են եւ վերնագոյններէն օրհնուի. եպիսկոպոսը կ'օրհնէ եւ ոչ թէ կ'օրհնուի¹⁹:

Հոս կը վերջանայ մար Դիոնիսիոսի գրութիւնը, որ հերքեց Մահմետականները, Հրեաները, Նեստորականները, Բաղկեղանականները եւ Հայոց սովորութիւնները: Իսկ դուն ետանդուն եւ սիրալիբ տէր, որ խնդրեցիր իրմէ այս գործը եւ քու յոյսիդ համարձայն կը վերջանայ՝ աղօթք նուիրէ ի փոխան, որ արժանի ըլլայ երանացուցիչ տեսլանքին Անոր, որուն համար էին այս խօսքերը, որուն համար յարձակուած կը կրենք հերեպիտներէն, եւ որ մեր Տէրն ու Աստուածն է Հոգւոյն փառք ընդ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն*:

Հ. Պ. ԵՍԱՊԱԼՆԱՆ



ԽԱՉԱՏՈՒՐ ԵՐԳԵՊԻՍՎՈՊՈՍ ՀԱԼԷՊԻ

ԺԶ. դարու առաջին կիսուն մէջ Հալէպի ազգային եւ եկեղեցական կեանքի գլխաւոր ղեկավարն ու գործիչը կը հանդիսանայ Խաչատուր Արքեպիսկոպոս Հալէպցի, որքի Մահմետական կաթողիկոսը Աստուածատուրի եւ տեսի մուշտակապործ Աստուածատուրի եւ Ծնոփորի: Ծննդեան թուականը անյայտ է, կենթադրեալ 1470ի մօտ թուական մը: Փոքր կ'ենթադրենք 1470ի մօտ թուական մը: Հաւանաբար տարիքին Երուսաղէմ գացած, հաւանաբար իր ծնողքին հետ, եւ աշակերտած է Ս. Յակոբայ այն ատենի Դասատան եւ միաբանակցած անոր:

Առաջին իսկ ակնարկով կարելի է ըսել որ Խաչատուր, իբր ուշիմ եւ խոստովալից քահանայ, գրաւեց ուշադրութիւնը Յովհաննէս Թլկուրանցի կաթողիկոսին, որ ընդ-

հանրապէս Հալէպ կը նստէր եւ այստեղէն ալ կը կատարէր Երուսաղէմի գործերը: Կրնանք ենթադրել որ Խաչատուր, Յովհաննէս կաթողիկոսի փափաքովն էր որ Երուսաղէմ մեկնեցաւ, ու հոն շուտով ստացաւ քահանայական կարգ, ցոյց տալով խոստովանութիւնը գործունէութեան մը ապագան: Խաչատուր Հալէպի մէջ տիրացած էր արդէն ուսման բաւարար պաշարի մը եւ արարեցնի մէջ իր ունեցած հմտութիւնը շուտով օգնեց իրեն Երուսաղէմի մէջ գրաւելու յարաբերական պաշտօններ, որոնց վերջին ժամանակներու մէջ Քարգվան անունը կը տրուի: Յայտնի չէ թէ որմէ՞ ձեռնադրուեցաւ արեւոյց, բայց ասանց վարանման կարելի է ըսել որ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Թլկուրանցի կաթողիկոսէն, հաւանաբար Հալէպի մէջ, իբր տիտղոսաւոր Առաջնորդն ու Արքեպիսկոպոսը Բերիոյ Թեմին, պաշտօն մը զոր վարեց երկար տարիներ, թէեւ ընդմիջարար, ըլլալով միեւնոյն ժամանակ վերատեսուչն ու միւլթէվէլիին Երուսաղէմի Պատրիարքութեան, եւ այդ դժուարին պաշտօններուն վրայ ցոյց տալով արդիւնաւոր գործունէութեան մը ապացոյցը: Գործնական միտքի տէր հոգեւորական, ժամանակի պայմանները լիովին ուսումնասիրած, Երուսաղէմի Ս. Տեղեաց իրաւունքներուն խորապէս տեղեակ, ազգային շահերու պաշտպան, իբր տասը տարի ան գիտցաւ արժանի կերպով ծառայել Ս. Յակոբայ Աթոռին: Ըլլայ Հալէպի, ըլլայ Երուսաղէմի ձեռագրաց յիշատակարաններուն մէջ, ինչպէս նաեւ Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ վերատին նորոգութեան առթիւ զրուած արձանագիր-յիշատակարանին մէջ, իր անունը յիշատակուած կը գրուենք, իբր իր ժամանակի գործունեաց, շինարար ու խոհեմազարգ եպիսկոպոսներէն մին եւ որ Հալէպի Առաջնորդական գաւազանին վրայ կը փայլի իբր արդիւնաւոր հովիւ:

Խաչատուրի անունը առաջին անգամ ըլլալով յիշատակուած կը գտնենք 1524ին, նախքան Հալէպի առաջնորդութիւնը, իբր փոխանորդը Յովհաննէս Պատրիարքի, զոր ծակցութեամբ Ղաննէմի որդի Մանսուրի: Խաչատուր Արքեպիսկոպոս կարգի կը զննէ Բեթղեհէմի Հայոց վանքին վրայ գրուած դափար անուամբ ծանօթ տուրքը, որով գատարանի կարգադրութեամբ Բերիական երկու գրամ արծաթ միայն կը գանձուէր իւրաքանչիւր ուխտաւորէ: Խաչատուր Արքեպիս-

¹⁹ De Lagarde, Rel. Jur. Eccl. Ant., p, 24.
 * Գիոնեսիոս Բարսաւրիի Հակաճառութեան կցած է Հայոց աւարկութիւններու դէմ ուրիշ երեք պատասխաններ ալ, շատ կծու եւ անբոյլատրելի որակով: Գերով համեմուտ: Այս բաժինը յարմար չեկատեցնելով համեմուտ: Այս բաժինը յարմար չեկատեցնելով գետեղել Ուսումնաբերքիս էջերու մէջ: Խմբագր. «Հանդէս Ամսօրեայ»: